

  
Հաստատված է  
ԳՊՀ գիտական խորհրդի 2006թ.  
նոյեմբերի 4-ի թիվ 2 նիստում  
թեկադր Ռ. Խ. Հակոբյան  
«04» նոյեմբերի 2006թ.

## Կ Ա Ր Գ

### ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Սույն Կարգը սահմանում է Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ընդհանուր պայմանները:
2. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը կազմակերպվում է կիսամյակային (կրեդիտային) սկզբունքով: Առաջին և ավարտական կուրսերում երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն չի կազմակերպվում: Հավակնորդների դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երկու շաբաթների ընթացքում:
3. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթությունը իրականացվում է միայն վճարովի սկզբունքով:
4. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը թույլատրվում է, եթե առարկաների ժամաքանակների 25%-ից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգաբանների և քննությունների թիվը, հաշվի առնելով բուհերի և մասնագիտությունների առանձնահատկությունները, ըստ տվյալ կիսամյակի չի գերազանցում 8-ը:
5. Դիմումները քննարկելու նպատակով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով: Համալսարանի ռեկտորը, ատեստավորման հանձնաժողովում հարցը քննարկելուց հետո, որոշում է ուսանողի ընդունման ժամկետը, կուրսը և մյուս պայմանները, կամ էլ պատճառաբանված հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը: Դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երկու շաբաթների ընթացքում:
6. Ատեստավորման հանձնաժողովը մրցութային հավասար պայմանների դեպքում ըստ հերթականության առավելություն է տրվում՝
  - ա) տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին,
  - բ) առավելագույն մասնագիտական ստաժ ունեցող դիմորդներին,
  - գ) դիպլոմի ներդիրում նշված առարկաների քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին:
7. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող՝ տվյալ կիսամյակում ըստ մասնագիտության ուսանողների թիվը չպետք է գերազանցի

տվյալ մասնագիտության համար ՀՀ կրթության և գիտության նախարարության լիցենզիայով սահմանված տեղերի քանակը:

8. Տարբեր պատճառներով գոյացած առարկայական տարբերությունները և առարկաների առանձին բաժինները (ուսումնական պլանների տարբերություններ, չհանձնած քննություններ և ստուգաքննություններ) համարվում են ակադեմիական պարտքեր: Դրանց ցանկը և ծավալները որոշում է Համալսարանը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները Համալսարանի կողմից սահմանած անհատական ժամանակացույցով:
9. Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում Համալսարանը ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացնում հաշվետվություն երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողերի շարժի վերաբերյալ:
10. Ոչ պետական չհավատարմագրված բուհերի շրջանավարտներին չի թույլատրվում Համալսարանում ստանալ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն: